ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

05 հունիսի 2025թ.

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրն ամբողջությամբ միակողմանի լուծելու մասին

ՆԱՏԻՎԱ ՍՊԸ-ի տնօրեն
Պարույր Արղուշյանին

Հարգելի պարոն Արղուշյան,

ՀՀ Արմավիրի մարզի Արմավիրի համայնքապետարանի (այսուհետ՝ Գնորդ) և ՆԱՏԻՎԱ ՍՊԸ-ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 2025թ.-ի մայիսի 23-ին կնքվել է համաձայնագիր, որով ուժի մեջ է մտել 2024թ.-ի դեկտեմբերի 20-ին կնքված **ԱՔ-ԷԱՃԱՊՁԲ-24/31-1** ծածկագրով գնման պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր): Պայմանագրի շրջանակներում Վաճառողը ստանձնել է պարտավորություն մատակարարել Պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված ապրանքները: Ձեր կողմից ներկայացված գրության համաձայն հրաժարվում եք Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումից:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու հիմքով ՀՀ Արմավիրի մարզի Արմավիրի համայնքապետարանը հարկադրված է 2025թ.-ի հունիսի 06-ից Պայմանագիրն ամբողջությամբ միակողմանի լուծել: Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառել ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման մասին կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Միաժամանակ հայտնում ենք, որ Վաճառողին տրվում է 5 աշխատանքային օր՝ որակավորման և պայմանագրի ապահովումները՝ համապատասխանաբար **2077,5 (երկու հազար յոթանասունյոթ ամբողջ հինգ տասնորդական)** ՀՀ դրամի և **1385 (մեկ հազար երեք հարյուր ութսունհինգ)** ՀՀ դրամի չափով, վճարելու համար: Փոխանցումը անհրաժեշտ է կատարել Գնորդի բանկային հաշվին (**ՀՀ Ֆինանսների նախարարություն 900335201092**):

Սահմանված ժամկետում փոխանցումը չկատարելու դեպքում պարտավորվում ենք որոշում կայացնել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6/ա-րդ կետի համաձայն ՆԱՏԻՎԱ ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Վ. ՍԱՐԳՍՅԱՆ**